

րենար : || Արմնոյն մեծութեան կողմանէ փղէն քիչ մը պգտիկ է . գլուխը խիստ մեծ , ականջները կարծ ու բարակ , մէջը մութ կարմիր մազերով . աշուրները մանր , քիթը լայն , բերանը չափէ դուրս մեծ , և չորս դին մազոտ . լեզուն թանձր , վիզը հաստ ու կարծ , ոտուրները փղի ոտքին նման , պոչը պգտիկ : || Արմնոյն սովորական երկայնքն է 14 ոտնաչափ , բարձրութիւնը չորս ոտնաչափէն աւելի . մորթը սև , լերկ , կարծը ու հաստ է , անանկ որ ոչ նետով և ոչ հրացանով՝ կըվիրաւորուի . միայն փորուն կաշին կակուղ է , անոր համար որսորդներն ալ կըջանան որ փորը վիրաւորեն : || Կուաները խիստ ձերմակ , ու փղուկրէն աւելի կարծը են , ու երկար ատեն անցնելէն վերջն ալ չեն գեղնիր , անոր համար արհեստաւորները ասկէ զանազան տուփեր ու պգտի ամաններ կըշինեն :

|| Ն գետերուն մէջն որ ձիագետի կայ՝ շատ վտանգաւոր է ձամբորդութիւն ընելը . վասն զի շատ անգամ գետին տակը պահուը ըլլալով , երբորնաւակի մը անցնելու ըլլայ՝ յանկարծակի վեր կելլէ ու նաւակը կրնկը լիք . երբեմն ալ փոխանակ մէկէն 'ի մէկ ընկղմելու , առաջ նաւակին երկու կողմի տախտակները կըփրցընէ , ու վերջը ակռաներովը նաւակը տակը կըքաշէ : Բայօր օրը ջրի մէջ անցնելէն ետքը իրիկուան դէմցամաքը կըքաշուի , ու հոն կանցընէ գիշերը , և գրեթէ միշտ նոյն տեղը պառկելուն համար՝ մէկ մեծ փոս մը կըձեանայ ան տեղը :

() Թենթացիք երբոր կուզեն ձիագետիին ձագը բռնել՝ մայրը կըվախցընեն որ ձագը թողով փախչի , ինչպէս շատ անգամ կըյաջողի . ու երբոր ձագը կըբռնեն տուներնին կըպահէն , շուտով կընտանենայ : Ձիագետիին միսը համեղ է կըսէն . մանաւանդ եղին համը շատ կըգովեն : Ալաշին ա-

ղէկ սեկ՝ կըշինուի : || Սուրբ գրոց մէջ բեհմովթ ըսուածը կերենայ թէ աս կենդանին է : Երիստոտէլ կըսէ թէ ձիագետին բաշ ունի , ու թաթահերձ է . բայց հիմակուան ձիագետիին համար պիտի ըլլայ իր խօսքը : Ալինիոսի և ուրիշ պատմիներուն խօսքին նայելով , հռոմայեցիք կրկէս ներուն՝ մէջ շատ անգամ ձիագետի ալ կըհանեն եղեր , որ ընտանեցուցած տեսակը պիտի ըլլայ :

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹԻՒՆ

Ի՞նչերութիւն գինէհատից համ բարեխառնութեան :

|| ՄԲԵՑԸ ԸՆՈՒՅՆ ԸՄՎԵԼիՔՆԵՐՈւ ԳՈՐԾԱԾՈՒԹԻՒՆ ԸՆԵՐԻ ԽԻՄԱՆ ՎԵՐԱԿԱՆ ԱՄԱՆ ՄԱՐԴԿԱՆ Մէջ . ՕԼՍՈՒԻ ԱՄԷՆ ԺԱՄԱՆԱԿ ԱԼ ԱՆՈՆց Գէշ գէշ հետեանքները երեցած են . բայց մեծամեծ վնասները աւելի շատցան ու յայտնի եղան՝ քանի որ օղի ու ցքի ըսուած ըմպելիքները , և ուրիշ ասոնց նման տեսակ տեսակ ոգելից հեղանիւթներ հնարուեցան : Իրաւ է որ ամէն տեղի մարդիկ նոյնպէս արբեցութեան չեն տար իրենք զիրենք , հապա ոմանք աւելի՝ ոմանք պակաս , բայց վնասները ամէնքն ալ գիտեն ու կըքաշէն , մանաւանդ արհեստաւորներն ու աշխատաւորները , որ չէ թէ միայն իրենց աշխատանքին պտուղը չեն վայելեր , ֆր վաստակ մը չեն ըներ , այլ նաև ըրած վաստակնին խումի տալով՝ կեանքերնին կըփացընեն , տներնին տեղերնին երեսի վրայ կըթողուն , իրենց ընտանիքը հացի կարօտ կըձգեն , տնէն դուրս ուրիշներուն ծիծաղելի կըլլան , տանը մէջ հազար տեսակ կոփիւներու խուզովուի-

Ներու պատճառ կը լւան, քանի մը տա-
րիէն սոսկալի հիւանդութիւններու
մէջ կիյնան կը փտտին, կը մեռնին, ու
խեղչ ընտանիքը ուրիշի ձեռքին և ո-
ղորմութեանը կարօտ կը թողուն :

Ո՞վ չըսեր թէ այսպիսի չարեաց դէմք առնելը մեծ բարերարութիւն է . ո՞վ չգովեր ան մարդն որ ոչ միայն ինքը ետ կըկենայ այնպիսի անկարգութենէ , այլ նաև ուրիշներն ալ կըորդորէ կըհամոզէ ետ կենալու : Եւ ահա աս մեծ բարերարութիւնը կընեն յշւրոպայի մէջ Դահնէհարից ընկերութիւն ըսուած միաբանութիւններ՝ քսան տարուընէ 'ի վեր : Իս ընկերութիւններուն առաջինը հաստատուեցաւ Ամերիկայի մէջ 1826ին . անկէ ետքը օրէ օր շատցան տարածուեցան ամէն տեղ , և մանաւանդ խռանտա ու Ակովտիա : Իս յսպիսի ընկերութեան անդամ գրուղները մասնաւոր ժողովարաններ ունին . հոն մէկտեղ կուգան , իրար կըորդորեն ամէն տեսակ արբեցընող խումերէն ետ կենալու , և ամէն մարդ խօսք կուտայ որ ոչ ինքը խմէ և ոչ իր ծառաներուն և ընտանեացը խմել տայ : Իս ընկերութիւնները գլխաւոր մեծեր ալ ունին՝ ժողովքով ընտրուած . և ասոնց պարտքն է քննել իմանալ թէ ո՞չափ ընպելիք կըծախուի տարին նոյն երկրին կամ քաղքին մէջ , ամսէ ամիս ո՞չափ կըպակսին խմողները , անով ո՞չափ ժողովուրդը կաղէկնայ , կամ թէ խմողները ո՞չափ վնասներու ցաւերու կըհանդիպին և այլն , և աս տեղեկութիւնները ժողովքին ալ կըհասկըցնէն գրով ու ետքը ընկերութեան ծախքովը կըտպեն : Իմերիկայի մէջ շատ մեծամեծ մարդիկ աս ընկերութեանց անդամ կըգրուին որ բարի օրինակ ըլլան ուրիշներուն . և ասկէ հինգ տարի առաջ՝ միայն ՚Նոր Յօրքի գաւառին մէջ 100,000 անդամ ունի եղեր գինեհատից ընկերութիւնը . անկէ զատ բոլոր Արագեալնահանգներուն մէջ հինգ հազար ընկերութենէն աւելի

կար, և անդամները մէկ միլիոնէն աւելի էին : Իռլանտայի՝ Ակովտիայի և Լոնգֆլայի մէջ ալ օրէ օր շատնալու վրայ են աս ընկերութիւնները . և այսպիսի օգտակար բարեկարգութեալիքաւոր նախանձայոյզ քարոզիչն ու յորդորողն է իռլանտայի կրօնաւոր մը՝ հայր Ո'աթիէօ կամ Ո'ատթէոս՝ անունով՝ Իսիկայ սովորաբար Իռլանտայի Քորք քաղաքը կրնատի . բայց ստէպ Զամբորդութիւն կրնէ ասդիս անդին, ու անդադար նոր նոր ընկերներ կը ժողվէ իրեն ծաղկեցուցած բարեկարգութեանը : Ով որ կուզէ իր ընկերութեան անդամ գրուիլ՝ կուգայ առջեր ծունկ կը չոքի ու կըսէ . “Արխոստանամ որ Իստուծոյ ծնորհքովը ամէն տեսակ արբեր ցընող ըմպելիքներէ ետ կենամ, ու ծանամ որ իմօրինակովս ու յորդու բանքովս ուրիշներն ալ ինծի հետեւին,, : Հայր Ո'ատթէոս ալ պատասխան կուտայ . “Իստուծոյ ծնորհքը վրադ ըլլայ որ կարենաս խոստ, մունքդ պահէլ, և Իստուծոյ օրհնութեամբը հոգւով և մարմնով երջանիկ ըլլաս,, : Իս կերպով ուր որ կերթայ՝ նոր նոր ընկերներ կը ժողվէ, և առաջուց գրուողներէն նորէն խոստմունք առնելով կը հաստատէ զիրենք հրապարակաւ, թէ դաշտի մէջ ըլլայ՝ թէ արտերու մէջ և թէ լեռներու գլուխը . և ինչուան երեսուն հազար հոգի մէկէն առջեր ծունկի վրայ տեսնուածը կայ . մէկ տեղ մը իմացուելուն պէս թէ ինքը հոն է՝ ինչուան տասը մզրն հեռու տեղերէ կը վազեն ոտքը կուգան : Իս տարի Ոկովտիայի Արասքով քաղաքը հասածին պէս՝ բոլոր ժողովուրդը զինքը դիմաւորելու ելեր են, ու երկու օրուան մէջ 13,000 հոգի գրուեր են իրեն ընկերութեանը : Այսպիսի աստուածահաճոյ և օգտակար քարոզութիւնը շատ զօրաւոր եղած է նաև իրեն սիրելի՝ անկեղծ՝ չարքաշ ու

զուարթ բնութենէն . անկէ զատ՝ մեծ անուն հանելուն մէկ պատճառն ալ աս է որ ()քոննէլին՝ խիստ մօտիկ բարեկամն է , այնպէս որ ասիկայ ամէն անդամ հրապարակական սեղաններու վրայ հօրն Ա'ատթէոսի կենացը համար բարեմաղթութիւն ընել կուտայ ամէնուն :

Ա'էկ խօսքով, մեծ յոյս կայ որ աս գինեհատից ընկերութիններուն ծաղկելով՝ արհեստաւոր ու աղքատ մարդիկ շատ խեղջութիւններէ ազատ մնան , բնութիւննին շտկուի , ու իրենց մարդկային՝ քաղաքական և քրիստոնէական պարտքերը դիւրաւ կատարեն :

ԴԱՏԻՄԱԿՈՒԹԻՒՆ

Ա'ըն է երիբորդ ինամուլ որ ծնողչ պէտի ընէն նոր ծնած դղուն վրայ :

ՏՆՈՒՄԸ վրայ ընելու երկրորդ խընամքը , որ զօրութեամբ առաջին պէտք է սեպուի , աս պիտի ըլլայ որ իրենց հոգին ու խղջմտանքը աղէկ կրթութիւն առնու : Տղայ մը երես կըսկսի բան ձանչնալ ու խօսք հասկընալ , թէպէտ և չկարենայ բերնով խօսիլ , կըսկսի զանազան ձեւերով՝ ձեռքը ոտքը շարժելով ու երեսին գոյնը փոփոխելով նշաններ տալ , ու սրտին ուղածը հասկըցնել : Ին միջոցին տղուն մտքին մէջ խիստ աղէկ կրտպաւորուի ամէն տեսածը՝ թէ աղէկ ըլլայ թէ գէշ . որով կիմացուի թէ ո՛ր չափ զգուշալի է՝ այնպիսի բաներ ցուցընել տղուն որ մտքին մէջ գէշ երևակայութի ու գէշ տպաւորութի կընեն . և որչափ հարկաւոր է այնպի-

1 Օքոննէլ անունով իռլանտացին աշխարհքիս էն վարպետ փաստաբանն է հիմա , իռլանտային իրաւունքները պաշտպանող , և բոլոր անդդիացւոց առջել զարմանալի իր ճարտասանութեանը համար : Ուրիշ անդամ տւելի ընդարձակ տեղեկութիւն կուտանք իր վրայ :

սի անմեղու զուարձալի բաներ դնել աչքին առջեւն որ երեակայութիւնը հայլիի պէս մաքուր ու անարատ մընայ :

Այբոր տղան կըսկսի գէշ բաղձանքներ ու անկարգ ախորժակներ ցուցընել , պէտք է խոհեմութեամբ մէկէն գիմացը առնել , մանաւանդ երբ որ քիչ մը խելքը բացուած է . երբեմն յանդիմաննելու , երբեմն ուրիշներուն առջին ամըցցընելու , երբեմն ալիրեն ուղածները ընելու է . բայց միշտ պէտք է նայիլ որ ըլլայ թէ պատիժը յանցանքէն աւելի ըլլայ . չէ նէ տղաքը ծնողքներէն կըսրտին , չեն սիրեր զանոնք , և ոչ յօժարութք կըհնազանդին անոնց ըսածին : Ը ատ գէշ սովորութիւն է որ ունին ոմանք , որ տղան պզտի յանցանք մը ընելուն պէս՝ ձեռքերնին սորված է անխնայ զարնելու ծեծելու . որով ուրիշ անթիւ վնասներէն զատ՝ մէյմբ անքանի պէս կըմեծնան տղաքը , և մեծնալէն ետքն ալ առանց ծեծի խելօք չեն կենար . երկրորդ՝ կամաց կամաց ձեծ ուտելը բանի տեղ չեն դըներ . խօսքով խրատուիլ ալ սորված ըլլալով կըլլան անկիրթ , անսանձ ու անզգամ մարդիկ . երրորդ՝ այնպիսի անխոհեմպատիժներով շատ անդամ տղաքը ապուշ կըլլան մոքով , և հիւանդոտ մարմնով :

Ա'իայն թէ աս ալ կայ որ յանցանքին նայելով՝ խիստ քիչ ըլլայ պատիժը . չէ նէ տղան ըրածը պզտի բանի տեղ կըդնէ , ու ծնողաց սիրոյն վստահանալով կըսկսի ուրիշ անկարգութիւններ ալ ընել համարձակ :

Տղու մը վրայ երեցած գէշ ախտերն ու յօժարութիւններն ընդհանրապէս ասոնք են . անձնասիրութի , կամակորութիւն , անհնազանդութի , բարկութիւն , վրէժինդրութիւն , նախանձ , փափկասիրութիւն ու կամապաշտութիւն : Այս ախտերը թէպէտ և մարդուս ապականեալ բնութեանը մէջ կան , բայց շատ անդամ ծնողք՝ դայեակը և ուրիշ տանը մէջ